Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

LGП
1512

1998

# ԱԿՏ

ԿԱՄ

## ՏԱՐԵԿԱ՛Ն ՀԱ՛Ն-ԴԷ՛Ս

ՆԵՐՍԻՍԵԱ՛Ն ՀՕԳԵՒՈՐ

ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԹԻՖԼԻ-ԶՈՑ·

ԹԻՖԼԻԶ:

1853

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

# Մ.ԿՏ

ԼՔՕԻ ԳՐԱԴԱՐԱՆ

կամ

## ՏԱՐԵԿԱ՛Ն ՀԱ՛ՆԴԷՍ

՛Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Հայոց

Թիֆլիզու:

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն ՛ՆԵՐ-ՍԻՍԻ Ե. Սրբազնագոյն Կաթուղիկոսի և Ծայրագոյն Հայրապետի ամենայն Հայոց:

[illegible]

## ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Мая 21 го дня 1853 го года.

*Исправляющій должность Ценсора И. Кайтмазовъ.*

4 1512-60

28. 1514

# ԱԿՏ

կամ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԷՍ

## ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԹԻՖԼԻԶՈՅ

## ՚Ի 17 Մարտի 1853 ամի։

Ուսումնական կառավարութիւն Հոգեւոր Դպրոցի Հայոց Թիֆլիզոյ կանոնաւորեալ կարգադրութեամբ նշանակեաց, զի տարեկան Հարցաքննութիւնք սկսցին 19 էն մարտի։ Հոգաբարձութիւնն Հոգեւոր Դպրոցի օրագրական սահմանադրութեամբ ՚ի 28 փետրվարի կարգաւորեաց՝ Սան կարգի առարկայից հարցաքննութեան կազմել զցուցակ՝ և տպագրութեամբ յայտնել բոլոր վարժապետաց, առաջարկելով, զի իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ վասն առակայի ուսումնատուութեան իւրոյ կազմեսցէ զառանձին ցուցակ (ըստ տպեալ օրինակին) և գրեսցէ ՚ի նմին զանուանս և զազգանուանս աշակերտաց, զբաժանումն դասատան, թէ որքան են անցեալ ընդ իւրաքանչիւր բաժանման, և սահմանեալ թուանշանօք զյառաջադիմութիւն իւրաքանչիւր աշակերտի, թողլով զառանձին դատարկ գիծ վասն նշանակելոյ ՚ի ձեռըն հարցաքննչաց զաստիճան գիտութեան և պատասխանատուութեան իւրաքանչիւր աշակերտի։ Զմի օրինակ դասակարգութեան առարկայից հարցաքննութեան մատուցանել յորմէ Դպրոցի յընդհանուր տեղեկութիւն ամենայն ցան-

կացողաց, և զմիւսն մատուցանել (Ի Տփղիսոյ Լուէ ընդ յայտարարութեան 'ի 5 էն Մարտի № 68) Վեհափառ Կաթուղիկոսին ամենայն Հայոց Տեառն ՆԵՐՍԻՍԻ։ Եւ վերջապէս յաւարտ հարցաքննութեանց վասն հանդիսի տարեկան Ակտի և վարձատրութեան գերազանցեալ աշակերտաց տալ զառանձին ընկուցանեմ։

յ9 ն Մարտի յութերորդ ժամու առաւօտուն 'ի մեծ դահլիճի Դպրոցին ժողովեցան բոլոր աշակերտք, Հոգաբարձուք, Տեսուչ և Վարժապետք։ Զկնի կէս ժամու ժողովեցան բազում հայազգի ուսումնական Հոգևորականք և Աշխարհականք։ Վերջապէս եկն Վեհափառ Կաթուղիկոսն և սկիզբն եղև հարցաքննութեանց։ Այսու կարգաւ յառաջնում աւուր կատարեցան Հարցաքննութիւնք Աստուածային պատմութեան, Կրօնագիտութեան, Եկեղեցական պատմութեան և Հայոց լեզուի։ Յերկրորդում աւուր՝ Ռուսաց լեզուի։ Յերրորդում աւուր՝ մնացորդն Ռուսաց լեզուի և հարցաքննութիւն Թուաբանութեան։ Եւ 'ի չորրորդում աւուր երկրաչափութեան և բնագիտութեան։ Հարցաքննութիւնք յամենայն աւուր շարունակէին յ8 ժամէ առաւօտուն ց1 ժամն, և յետ կէս աւուր յ3 ժամէն մինչև ց7 ժամն։ Բոլոր այսոցիկ հարցաքննութեանց նախագահ էր Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց և զմեծ մասն հարցմանց առաջարկէին տեարք Հանդիսականք։ Պատասխանատուութիւնք աշակերտաց էին այնքան գերազանց, այնքան բաւականացուցիչ և այնքան մանրամասն, մինչ զի բոլոր Հանդիսականք ակներև ցուցանէին զիւրեանց չափազանց ուրախութիւն և յայտնէին վարժապետաց զմեծ շնորհակալութիւն վասն փորձեալ հմտութեան նոցա և ձևոյ ուսումնատուութեան։ Աշակերտք վերին դասատան յաւարտ հարցաքննութեանց ընթերցան զհայերէն և ռուսերէն գրեալ շարադրութիւնս իւրեանց և 'ի մատուցանելն զայնս Աստուածագոյն Հայրապետին ստացան 'ի նորին Վեհափառութենէ զլիաբերան օրհնութիւն և զգովասանս։

Յետ հարցաքննութեանց մասնաւոր խորհրդարանն վար-

ժապետաց և ուսուցչաց ընդ նախագահութեամբ Պ. Տեսչի Դպրոցիս սահմանադրեաց, թէ որ աշակերտք արժանի են փոխել 'ի ստորին դասատանց 'ի բարձրագոյնս և քանիք 'ի նոցանէ արժանի են պարգևատրութեանց. ընդ նմին բաժանեաց զպարգևսն յերկուս աստիճանս, յորոց վասն մրցանակի առաջին աստիճանի նշանակեաց զփառաւորագոյն ընտիր մատեանս երևելի հեղինակաց Հայոց ոսկեգիր մակագրութեամբ 'ի վերայ կազմին՝ վասն Գերազանց Ջանասիրութեան, յառաջադիմութեան և պարկեշտ վարուց. իսկ վասն երկրորդ աստիճանի զգանազան հայերէն մատեանս մակագրութեամբ 'ի վերայ կազմին՝ վասն Գովելի Ջանասիրութեան և պարկեշտ վարուց։

'Ի վերայ այսր սահմանադրութեան մանաւանդ խորհրդարանի վարժապետաց Հոգաբարձութիւնն Դպրոցի օրագրական սահմանադրութեամբ 'ի 11 ն մարտի կարգաւորեալ՝ Վասն հանդիսի տարեկան Ակտի նշանակել զ17 ն մարտ ամսոյ, զբոլոր պատրաստութիւնս յանձնել Հոգաբարձուաց, պատրաստել զբոլոր ընծայելի մատեանս և տպել տոմսակս հրաւիրել (ըստ հրաւիրակ ցուցակին) մինչև ց 400 Հանդիսականս, յորոց մէջ են բոլոր Թիֆլիզու Հայազգի բարձրաստիճան Հոգևորականք, Կնեազք, Ազնուականք, Քաղաքական Աստիճանաւորք, Քաղաքացիք և արհեստաւորք (ուստաբաշիք), և վերջապէս զկարգ Ակտին տպել 50 օրինակ 'ի տեղեկութիւն հանդիսականաց. (ընդ ձևոց հրաւէրակի տոմսակին և կարգի Ակտին տես 'ի վերջն)։ Այս օրագրական եզրակացութիւն Հոգաբարձութեան կատարեցաւ ընդ անընդմիջական տեսչութեամբ անդամոց նորին։

'Ի նշանակեալ աւուր, այն է 'ի 17 ն մարտի, մեծ դահլիճն Հոգևոր Դպրոցի պատրաստեալ էր այսպէս։ Հանդէպ դրանն կախեալ էր յորմն փրկչական պատկեր, 'ի վերին ճակատ դահլճին կախեալ էր մեծ պատկեր ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՑ ՆԻԿՈԼԱՅՈՍԻ Ա. յաջմէ կողմանէ պատկեր փոխարքային Կովկասու Կնեազ Միխայել Սիմոնովիչ Վօրոնցովի, 'ի ձախմէ պատկեր Վեհափառ Կաթու-

զինկօսն և ծայրագոյն Հայրապետի Ամենայն Հայոց Տեառն Ներսէսի: Հանդէպ Կայսերական պատկերին կախեալ էր յորմն մեծ պատկեր Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի և վեհօրէնից Հայաստանի: 'Ի վերայ միւս որմոց կարգա-կախեալ էին տասն Նորատիպ աշխարհացոյցք (աշխարհագրական քարտէ) և բոլոր դահլիճն լուսաւորեալ էր մոմակալօք և մեծ ջահիւ 'ի կենդրոնի: 'Ի մէջ դահլիճին եդեալ էր մեծ տրապէզ ծածկեալ կարմիր մահուդով ոսկեփաւնջ ծո-պիւք: 'Ի վերայ տրապիզին շարեալ էին կարգաւ ընծայելի մատեանքն և պարզադրութիւնք աշակերտաց: Հանդէպ տրա-պիզին փոքր ինչ հեռակողմն եդեալ էր ամպիոն, զորով յերկուս խումբս բաժանեալ կանգնեալ էին աշակերտք և յաջմէ նոցա առանձին խմբով կանգնեալ էին դասք դպրաց և յառաջոյ նոցա վարժապետն եկեղեցական երաժշտութեան Բարեկարգիչն եկեղեցեաց Հայոց Թիֆլիզու Պ. Ղազար Աւագ-Քահանայն Պաւլթեանց: Շուրջ զտրապիզաւն 'ի ձև կիսա-բոլորակի և ըստ տարածութեան բոլոր որմոց շարեալ էին մեծ և փոքր աթոռք վասն բազմականաց:

Յերեք ժամու յետ կէս աւուր սկսան ժողովել հրա-ւիրեալք և 'ի 4 ժամու բոլոր դահլիճն լցաւ բազմականօք: 'Ի լնանալ 4 ժամուն դպրոցական զանգակն ծանոյց զգա-լուստ Սրբազնագոյն Հայրապետին: Հոգաբարձուք Դպրոցին Տիտուլեարնի Սովետնիկ և Կոլեժ Պաւլիթ Յով-հաննիսեան Թամամշեանց, Ազնուականք Պաւլիթ Գրիգորեան Խէրօղլինեանց և Գէորգ Բաստամեան Մանդէնեանց, Տե-սուչ Դպրոցին Գիմնազիոնի Ստուդենտ Ազնուական Պետ-րոս Սամուէլեան Շահնեանց, Աւագ Վարժապետք Հայոց լեզուի Յակոբ Գէորգեան Կարինեանց և Ռուսաց լեզուի Միքայէլ Աերովբեան Պատկանեանց գնացին ընդ առաջ Նորին Վե-հափառութեան մինչև 'ի ներքին սանդուղն: Վեհափառ Հայրապետն ուղեկցութեամբ բարձր Սրբազան Գէորգ Ե-պիսկոպոսի, տեղւոյս Յաջորդ Թադէոս Վարդապետի, բոլոր Անդամոց Սինօդական Կոնսիստորիայի և բոլոր հրաւիրեալ Աւագ-Քահանայից և Քահանայից եմուտ 'ի Դպրոցն. և 'ի

զինուոր և ծայրագոյն Հայրապետի Ամենայն Հայոց Տեառն Ներսիսի։ Հանդէպ Կայսերական պատկերին կախեալ էր յորմն մեծ պատկեր Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի և վանօրէից Հայաստանի։ Ի վերայ միւս որմոց կարգաւ կախեալ էին տասն նորատիպ աշխարհացոյցք (աշխարհագրական քարտ) և բոլոր դահլիճն լուսաւորեալ էր մոմակալօք և մեծ ջահիւ 'ի կենդրոնի։ Ի մէջ դահլճին եդեալ էր մեծ տրապիզ ծածկեալ կարմիր մահուդով ոսկեփունջ ծոպիւք։ Ի վերայ տրապիզին շարեալ էին կարգաւ ընծայելի մատեանքն և պարգևաբրութիւնք աշակերտաց։ Հանդէպ տրապիզին փոքր ինչ ձախակողմն եդեալ էր ամպիոն, զորով յերկուս խումբս բաժանեալ կանգնեալ էին աշակերտք և յաջմէ նոցա առանձին խմբով կանգնեալ էին դասք դպրաց և յառաջոյ նոցա վարժապետն եկեղեցական երաժշտութեան Բարեկարգիչն եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ Պ. Ղազար Մատ. Քահանայն Դաւթեանց։ Շուրջ զտրապիզաւն 'ի ձև կիսաբոլորակի և ընդ տարածութիւն բոլոր որմոց շարեալ էին մեծ և փոքր աթոռք վասն բազմականաց։

Երեք ժամու յետ կէս աւուր սկսան ժողովել հրաւիրեալք և 'ի 4 ժամու բոլոր դահլիճն լցաւ բազմականօք։ Ի լնանալ 4 ժամուն դպրոցական զանգակն ծանոյց զգալուստն Սրբազնագոյն Հայրապետին։ Հոգաբարձուք Դպրոցին Տիտուլեարնի Սովետնիկ և Ասպետ Դաւիթ Յովհաննիսեան Թամամշեանց, Ազնուականք Դաւիթ Գրիգորեան Խէրօդինեանց և Գէորգ Բաստոմեան Մանդէնեանց, Տեռուչ Դպրոցին Դէյստվիտելնի Ստուդէնտ Ազնուական Պետրոս Սամուէլեան Շանշեանց, Աւագ Վարժապետք Հայոց լեզուի Յակոբ Գէորգեան Կարինեանց և Ռուսաց լեզուի Միքայէլ Սերովբեան Պատկանեանց գնացին ընդ առաջ Նորին Վեհափառութեան մինչև 'ի ներքին սանդուղն։ Վեհափառ Հայրապետն ուղեկցութեամբ բարձր Սրբազան Գէորգ Եպիսկոպոսի, տեղւոյս Յաջորդ Թադէոս Վարդապետի, բոլոր Անդամոց Վիճակային Կոնսիստորիայի և բոլոր հրաւիրեալ Աւագ Քահանայից և Քահանայից եկեալ 'ի Դպրոցն. և 'ի

Տէրը, Քրիստոս մեր մէջն է. զօրացէք եղբա՛րք, մեզ հետ է Նա, որ խոստացաւ տալ մեզ բան և իմաստութիւն առջև դատաւորաց և թագաւորաց (2)։ Բարձրացուցէք ձեր հոգւոյ աչքը և աներևութաբար կըտեսնէք Քրիստոսին բազմեալ այս հանդիսիս գահադլուխ։ Բացէք մարմնոյ և մտաց աչքերդ, և տեսէք Քրիստոսի եկեղեցւոյ աւանդապահը Սրբազնագոյն Հայրապետս իւր հայրական քաղցր ակնարկութեամբը պսակ այս հանդիսիս. մտիկ տուէք Նորա պատկառելի կերպարանքին, որ իբրև մին բազմաշխատ երկրագործ արեան քրտինք թափելով, վարել, ցանել, հնձել, և այս կալիս մէջ հաւաքել է իւր պատուական հունձը, և այժմ մին ուրախական հանգստեամբ մտիկ է տալ, թէ որքան և որպիսի արդիւնք է բերել իրա բազմամեայ անքուն աշխատանքը։ Աստուածագումար է ուրեմն ժողովս՝ ուր Քրիստոս ներկայ է. Աստուածագումար է ժողովս՝ ուր արդարութեան օրէնքը կըկատարուի, ուր փոխատուն իրա հաշիւը կըպահանջէ, և փոխառուքը պատրաստ են իրանց հաշիւը տալու, եթէ մինին մին շահօղների չափ չէ, գո՛նէ հնգին մին դատողների հաւասար (3)։ Բայց եթէ կամիք այս ժողովքի Աստուածագումար լինելուն աւելի ազդու, աւելի զօրաւոր ապացոյցը տեսնել, կ'աղաչեմ փոքր մի համբերել։ Դո՛ւք ինքնին գիտէք, որ ամենայն գործ բարի կամ չար կըլինի իւր նպատակովը և դիտաւորութեամբը, և Քրիստոս իւր ներկայութիւնը չըխոստացաւ ամենայն ժողովքի մէջ. չ'ասաց միայն՝ ուր ժողովեսցին երկու կամ երեք, անդ եմ ես 'ի մէջ նոցա, այլ թէ՝ ուր ժողովեսցին երկու կամ երեք յանուն իմ, անդ եմ ես։ Չարաժողովներ շատ եղած են և կըլինին, ո՛չ միայն անհաւատների, նա և Քրիստոնէից մէջ, որոնց նպատակն է վնաս հաւատոյ, վնաս մարդկու-

(2). Ղուկ՝ ԺԲ. 11.
(3). Ղուկ՝ ԺԹ. 18.

թեան և վնաս ընկերութեան, ուր քահնները գործ են ածում իրանց վնասակար ճարտասանութիւնները, շողոքորթները գործ են ածում իրանց խաբէական տրամաբանութիւնները, ամաչում եմ ասել, Աստուածաբաններն էլ սուրբ գրոց միտքը դէս դէն քաշկռտելով իրանց կրից և չար հակամիտութեանց գործիք են շինում. և ահա՛ առեան են ելնում Հաշկերտներ, Մասակներ, Սուրմակներ, Բըքիշյներ և այլ այսպիսիներ, և աշխատում են եկեղեցին խառնել, ազգը բաժանել, ընտանեաց մէջ խռովութիւն գցել և այլն. Այս ժողովքներին մէջ, Տեա՛րք, Քրիստոս չէ՛ ներկայանում, այլ ներկայ է լինում հին մարդասպանը հոգին չարութեան։

Բայց այս մեր ժողովքի նպատակը քրիստոնէական և ազգասիրական է. յանուն Քրիստոսի է այս ժողովս, վասնորոյ և ես այսօր այս ճառս նուէր անելով մեր ազգի քրիստոնէութիւնը և ազգութիւնը, կամենում եմ Ձեր միտը բերել Հայոց ազգի այս երկու առարկայի համար քաշած վիշտերը և թափած անթիւ արիւնները, խնդրելով Ձեր ախորժ ունկնդրութիւնը և մարդասիրական ներողութիւնը.

Ձեզանից շատերը, Տեա՛րք, տարի ու կէս առաջ այս իմաստութեան տաճարիս մէջ հաւաքուած լսեցիք այն ճառը, որը որ ես կարդացի բնաբան դնելով Սողոմոնի բանը՝ ‘‘ Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն ,, (1). մեր խօսակցութեամբը Ձեզ յայտնեցինք. թէ մեր մինչև այն օրը ուսման իսկական և միակ նպատակն էր Աստուածասիրութիւն և մարդասիրութիւն։ Այս առաջին դասը մեր կարողութեան չափ սովորելուց յետոյ, մեր համաճարանիս դաստիարակները սկսան երկրորդ դասը, իջանելով ընդհանուրից մասնաւորը, ընդհանրական Աստուածպաշտութիւնից 'ի Քրիստոնէութիւն, և մարդասիրութիւնից յազգասիրութիւն, որ ես ուրիշ կարճ բառով կ'ասեմ, Ազգութիւն։ Այս երկու վսեմ առարկան, այսինքն մեր ազգի քրիստոնէութիւնը և

(1) Առակ' ա. 7,

տգիտութիւնը լինելով իմ ներկայ ճառիս նիւթը, ջանացի իմ և Ձեր հեշտութեան համար մէկ մէկուց բաժանել և ջոկ ջոկ խօսիլ ամէն մին մասին վրայ. բայց որչափ աշխատեցայ բաժանել իրարից այս երկու անբաժանելի նիւթը, հնար չեղաւ, և գրեթէ, այս նիւթի վրայ խորհելու ժամանակս մին ձայն հատու ականջս «Օգտութիւնն է մայր բարեաց և անօգտութիւնն ծնող չարեաց» (2). իբրու թէ կամէր ասել՝ մի պատանիր. այս երկու նիւթը այնպէս անբաժանելի կապով են միացած, որ նրանց բաժանելը անկարելի է, կամ նրանց բաժանելը և ոչնչացնելը մի և նոյն է. Վասն որոյ ես էլ միութիւն սիրելով և միութեան աշակերտելով սկսում եմ խօսիլ այս երկու նիւթիս վրայ միասին:

Առաջին պատիժը, որի տակ ընկաւ մարդը իր խստասրտութեամբը, Աստծանից բաժանուիլը և հետևաբար մահը էր . և երբ մարդիկ Աստուծոյ անմիջական տեսութիւնից զրկուեցան, էն օրից սկսաւ մարդկային ազգի մէջ իրարից բաժանումը: Յիրաւի՝ մեծ և սքանչելի կը լինի այն օրը, երբ ամենայն ազգ և ազինք, ամէն աստիճանի և կրից տէր մարդիկ իրար օգնական լինելով հաստատէին մին հաւասար եղբայրական միութիւն և այն օրը կը լինէր եդեմական օր. Այս կարծիքը և ջանքը, որի նպատակն է հասցնել մարդուն այն կատարելութեան կէտը և ընդհանուր եղբայրութեան կեդրոնը, որից օտարացած է հազարաւոր տարիքներէ առաջ, առ այժմ անկարելի է արտաքին միութեամբ կամ համակերպութեամբ. այլ եթէ կամենան մարդիկ, կարօղ են միանալ իրարու հետ հոգեկան միութեամբ, ինչպէս Քրիստոս հրամայում է՝ Հոգի է Աստուած և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել (3). Առ արտաքին միութեան համար այժմեան շատ աշխատողներու

(2) Առակք.
(3) Յովհ" դ. 24

միայն էլ, ինչպէս յայտնի տեսնում ենք, այդ մարդասիրական վսեմ նպատակուն չէ. այլ միութիւն քարոզելով, մին նոր բաժանման ճանապարհ բացանելն է. մանաւանդ թէ, աւելի պարզ խօսելով, մին հին ազգի և լեզուի՝ ինչպէս մեր ազգն է՝ բառնալ, փճացնելն է նոյա նպատակը։ Ո՞ւր է ապա մեր ապագայ լաւուն յոյսը. ինչով պէտք է պաշտպանենք մեզ այս թագուն որոգայթներից։ Ահա այս մասին իմ կարծիքս։ Որովհետև ինչպէս, յայտնի է ամ մրդոյ, ընդհանուր միութիւնը անկարելի է. ուրեմն մեր ապագայ բարելաւութիւնը կախուած է ազգային միութենից։ Իսկ ազգային միութիւնները պահօղ պայմանները են՝ Քրիստոնէական կրօնք Լուսաւորչից պահ տուած ծէսերու և աւանդութեանց ճիշտ պահպանութեամբը, և ազգութիւն՝ հայ լեզուի ծաղկեցնելովը։ Քրիստոնէական կրօնքը՝ կապում է մեր հոգին Նրա հետ, ով որ նրա հիմնադիրն է, և նրանից հետ, որոնք նոյնը ընդունեցին և մեզ հասցրին։ Ազգութիւնը՝ նկարագրում է մեր առաջը մեր ազգի ծագումը, յառաջադիմութիւնը, կամ ինչպէս Խորենացին ասում է, որտեղից և ինչպէս առաջ գալը (4)։ Ամէն բան, ինչոր հեռացնում է մեզ մեր հայրենի և պապենական կրօնքից, աւանդութիւններից և լեզուից, մեզհամար հոր է փորում, որ մեզ մէկմէկուց բաժանէ. և երբ անհատները կըբաժանուեն, ո՞ւր կըմնայ ամբողջութիւնը։ Ազգի ներկայ վիճակին սուր աչքով մտիկ տալով մեր ամբողջութիւնը պահպանողներն են՝ Քրիստոնէական կրօնքը, Հայ անունը և Հայերէն դպրութիւնը։ Ազգային միութեան իսկական կապը սոցա լինելը մեր նախնիքը տակաւին կռապաշտութեան խաւարի մէջ եղած ժամանակները ճանաչելով, մեր աշխարհաշէն թագաւորները Վաղարշակը. Արշակը և Տիգրանը Հրէից գաղթականներին ստիպում էին իրանց հետ կրօնական միութիւն ունենալ։ Արամը՝ տիրելով Կեսարիոյ, հրաման է տալի այն տեղի բնակիչներին Հայերէն խօսել։ Բայց ինչ ժամանակ Հայոց ազգի

(4)․ Խորէն․՝՝ Ը։

բարենշան աստղը աղօտացաւ և Աստուած կամեցաւ մեր նախնեաց հաւատը և ազգութիւնը փորձել, կամ փորձանաց և վշտաց բովերումը նրանց աւելի պայծառացնել, մերկացան Թշնամիքը և նոյն Ճանապարհաւ սկսան ազգի միութեան կապը կտրել: Աղաչում եմ, Տեա՛րք, երբեմն կարդալ մեր հրաշաբան Եղիշէի պատմութիւնը, ուր կըտեսնէք, որ Պարսից կրակապաշտ կրօնից աւանդապահ քուրմերը Յազկերտին ինչ խորամանկ խորհուրդ են տալիս: Ասեն՝ „ա՛րքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ զայդ և զյաղթութիւնդ, և ոչինչ կարօտին նոքա մարմնաւոր մեծութեան, բայց եթէ 'ի մի օրէնս դարձուցես զամենայն ազգս և զազինս, որ են 'ի տէրութեան քում,, (1): Հնարիմա՛ց չարութիւն: Դաւ խմանում էին այն չարութեան աշակերտները, թէ կրօնն է՝ ազգային ամբողջութեան առաջին կապը, և երբ այն կապը կտրուէր, ազգութիւնը, որ նրա անբաժան ընկերն է, շուտով կըխզուէր: Այսպիսի մոգեր շատ են իլել մեր ազգի համար իւրաքանչիւր դարերումը: Ազգութեան աւանդապահ են լեզուն և դպրութիւնը, և երբ Պարսիկը կամեցաւ ազգութիւնը բառնալ, հաւաքեց Հայաստանի հազարաւոր մատեանները և սարի պէս դէզ արած կրակի մատնեց. և երբոր թէ այրելից ձանձրացած մնացածները Մրզպանի անել աշտարակումը բանտարգել արաւ: Ողբալի կորուստ: Հագարացին տիրեց Հայաստանին և ընտեղ, ուր 3000 տարի առաջ Արամը Հայերէն խօսիլ էր հրամայել, Հագարացին մահու երկիւղի նոյնը արգելեց: Իսկ եթէ Ձեր մէջը այն երկիրները գնացող մարդիկ կան, թող ցաւելով, նաև լալով, պատմեն ընկերներին, թէ այն ողորմելիքը իրանց հայրենի լեզուի համար հազարաւոր գլուխներ մահու մատնելից յետոյ չըկարալով դիմանալ բռնութեան դէմ, փոխել են իրանց լեզուն, այլ տակաւին, փառք Աստուծոյ, ոչ սրտերը: Կըտեսնէք այն տեղերը ողորմելի տեսիլ՝ Հայը Հայի

(1) Եղիշէ:

հետ Թուրքերէն է խօսում, էն էլ ոչ միայն փողոցումը, ոչ միայն ժողովքների մէջ, ոչ միայն տան մէջ, այլ և եկեղեցումը սրբազան խորհրդոց սպասաւորքն էլ նոյն լեզուաւ սրբազան անօթոց և սրբութեանց անունն են տալի. և եթէ մին Հայերէն խօսող մարդ մէջները գնայ, իր Հայ եղբայրը հետ խօսելու թարգմանի կըկարօտի։ Այսպէս են չորրորդ Հայաստանի բոլոր Հայերը, այսպէս են մեր Ռուբենեան վերջի թագաւորների բոլոր սերունդները։ Սրանից ջոկ խորամանկ Պարսիկը և Հագարացին Հայոց մաքէն իրենց Հայութեան յիշատակը բոլորովին ջնջելու համար, և նրանց իրենց Հայրենի տան պայծառութիւնը մոռացնելու համար արգելեցին նրանց իրանց ազգատոհմի անուամբ կոչել Ռուբենեան, Բագրատունի, Արծրունի և այլն. այլ հրամայեցին իրարից որոշելու համար կոչել իրանց հօր, երկրի և արհեստի մականուամբը՝ Պօղոսի որդի, Արփացի Յովհաննէս, դերձիկ Պօղոս և այլն։ Թողնենք Հագարացի և Պարսիկ անքրիստոնեայ տէրութեանց անօրէն ընթացքը. դարձնենք մեր աչքը քրիստոնեայ տէրութեանց մէջ և էնտեղ էլ կըտեսնենք զարհուրելի և քրիստոնէութեան հակառակ տեսարաններ։ Մեր Անի քաղաքի հարուստ և կարողութեան տէր ժողովրդեան մեծ մասը ձանձրանալով այլազգաց բըռնութիւնից, դիմեցին քրիստոնէից գիրկը. Լեհաստան ապնջական եղաւ նրանց. բայց քիչ ժամանակից փանատիկ հոգևորականաց բռնութիւնը այն հիւրերի վրայ սկսեց սաստկանալ. արգելեցին նրանց իրանց հաւատոյ և լեզուի ազատութիւնը, եկեղեցիները փակեցին, հոգևոր հովիւներին աքսորեցին, քառասուն տարեկան մարդիկ մնացին առանց մկրտութեան և առանց հաղորդի իրանց վիզը Հռովմէական եկեղեցւոյ ծանրատար լուծի տակ չըխոնարհեցնելու համար. և այս բռնութիւնը Հագարացւոց և Պարսից բռնութեանց պէս միջոց տալով չէր, այլ շարունակ և միակերպ հարիւր տարիի չափ քաշեց, մինչև կրօնը և ազգութիւնը մոռացնելով անհետ արին այնքան բազմութիւնը, որոնց այժմ տխուր յիշատակները միայն են երևում 'ի պարծանս Կաթոլիկու-

թեան և Բրիտոսի փոխանորդներին։ Այսպիսի բռնութիւններ իլել են նա և Յունաստանի մէջ. շատ Հայեր մեռել են Յունաց ազգութիւնը և դաւանութիւնը չընդունելու համար, որուն կենդանի ապացոյց կան մինչև ցայսօր Հայ Հոռոմ անուանեալ ժողովուրդը Հայոց մէջ։ Այս բռնութեանց, որչափ հնար էր, դէմ կացան Հայկայ և Արամայ որդիքը, չխնայեցին զոհել ոչ միայն իրանց ինչքը, այլ և իրանց կեանքը Լուսաւորչի երկանց ծնունդները, և որչափ նեղութիւնը սաստկանում էր, այնչափ էլ նրանց կրօնասիրութիւնը զօրանում էր։

Եկէք, մեր նախնեաց կրօնի և ազգութեան մէջ հաստատութեան անշարժութիւնը լսենք Պարսիկ մոգպետի բերանից, որ հինգերորդ դարումը գրում էր Պարսից Յազկերտ թագաւորին՝ ‘‘ Զի եթէ ինքեանք իսկ աստուածքն
,, եկեսցեն մեզ յօգնութիւն, չէ հնար օրինաց մոգութեան
,, ’ի Հայս առնուլ զհաստատութիւն, որպէս զխորձ առի
,, միաբանութեան ուխտի եկեղեցւոյն։ Զի թէև էին զօրք
,, աշխարհիս մոգ, ոչինչ խնայէին ’ի նոսա սաստկութեամբ,
,, ոչ միայն զարտաքինս այլ և զեղբարս և զորդիս և յա-
,, մենայն մերձաւորս իւրեանց, նա և ոչ յանձինս իւրեանց։
,, Մարդք՝ որ ոչ ’ի կապանաց զանգիտեն, և ոչ ’ի ստաց-
,, ուածոց պատկառեն. և որ յետին չար է քան զամենայն
,, չարիս, զմահ քան զկեանս ընտրեն,, (1)։ Եկաւ ժամանակ, որ թշնամիք տեսնելով, թէ Հայոց ազգի կրօնը և ազգութիւնը շորի պէս չեն, որ վրաներից հանեն, այլ մարմնոյ գոյնի պէս մամնոյն հետ մահուամբ միայն կըվերջանան, աւելի ձանձրանալից, քան թէ մարդկութիւնից դադարեցան բռնութիւնից. և էն ժամանակը տիրեց ազգի վրա մին տգիտութեան և թուլութեան ախտ. այնուհետև մեր կրօնի և ազգի թշնամիքը թողին բռնութիւնը և ձեռք առին խորամանկութեան։ Այն բռնութեան օրերից յետոյ առանց

(1) Եղիշէ։

բանութեան մեր ազգի մին մասը Թողեց իրա եկեղեցին, իրա լուսաւորչական աւանդութիւնը, և միացաւ օտարաց հետ։ Ցաւելով եմ ասում, որ այսօր էլ տեսնում ենք մեր քրիստոնէութեան և ազգութեան ազատ երկիրներումը մեր ազգի Թուլութիւնը. մին կողմը դաւանութեամբ բաժանուեցաւ, միւս կողմը սկսել է ազգութեամբ բաժանուիլ։ Հայութեան անունը փոխանակ պարծանօք ամենի մօտ յիշելու, կան շատերը, որ ամօթով են յիշում։ Հայոց ընկերութեան մէջ, նա և Հայոց եկեղեցումը, Հայը Հայի հետ օտար լեզուաւ է խօսում։ Այս ինչ հոր է արդեօք մեր առջևը մեր ձեռքովը բաց արած։ Ո՞չ պէտք է, որ տեսնէ։ Եթէ մին մարդու մին հայրենի ժառանգութիւնը խլելու լինին, աղաղակ կըբառնայ, վէճեր կը յարուցանէ, բողոքներ կ'անէ և ոչինչ չի խնայիլ իւր հայրենի ստացուածքը ձեռք բերելու. այլ կրօնից և ազգութեան ժառանգութեան համար անփոյթք են եղել։ Այժմ, փառք Աստուծոյ, հինգերորդ դարու բռնաւորները չըկան, որ բանի յափշտակեն մեր կայքը. մանաւանդ Ռուսաց օրհնաբանեալ տէրութեան մէջ. բայց մենք մեր անփութութեամբը մեր ժառանգութեանը մատնիչ ենք դառնում. Եղել են շատ անգամ և այժմ ևս կան ազգային այս անդին դանձերի յարդը չիմացողներ, որոնք միութեան քաղցր անունը միայն լսելով, առանց բանը քննելու, առանց վերջին մտիկ տալու և առանց ընդհանուր միութեան անկարելութիւնը նկատելու, շուտով վճռում են, թէ ինչ է. մին փոքր ազգ ենք. պէտք է շատերին հետ միանանք։ Պարոններ. այդպէս շուտով մի՛ վճռէք մեր ազգի պզտիկութիւնը. բազմութիւնով և մեծութիւնով հաւատը չէ սահմանւում. եթէ բազմութեան մտիկ տալու լինէինք, ա[illegible] պէտք է կռապաշտների և մահմէտականների հետևէինք։ Քրիստոսի հաւատը և ազգութիւնը շատութեան և մեծութեան վրայ չէ հիմնած. Լսեցէք. Քրիստոս իրա [illegible]թիւ եկեղեցին ինչպէս է գովում՝ «Մի երկնչիր հօտ փոքրիկ

[library stamp, partly legible]

զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն (1). և թէ՝ երանի աղքատաց հոգւով (2). Իսկ եթէ մեծութիւնք և բազմութիւնք աչքերից մեծ բան են թւում, հէն էլ ենք ունեցել իրա ժամանակին. Մենք բերենք Խորենացին այդ կարծիքի մէջ եղողների դէմ գրուածը՝ " Ոչ թէպէտ եմք այժմու փոքր և ընդ յոյժ փոքու սահմանեալ թուով, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ 'ի մերում աշխարհի ,, (3). Եթէ նրանցից մէկին ասես՝ դու ունիս հարիւր մանէթ, ուրիշն ունի հազար, բիւր և միլիօն. բե՞ր այդ քո ունեցածն էլ տո՛ւր նրան.- ո՛չ միայն չի համաձայնիլ, այլ և արդարութեան օրէնքներով կըպահանջէ, որ շատ ունեցողը աւելի պարտական է քիչ ունեցողին բաժին տալ: Դա ինչի՞ց է: Ընդուրից որ, այն փողը կամ իրա հօրիցն է մնացել, կամ աշխատանօք է ճարել. Բարի. ուրեմն ի՞նչպէս էք կարծում, էս քրիստոնէական կրօնք և ազգութիւնը չէ՞ր ներգթել: Ո՛չ, բարեկամք, չէ. Նկատեցէք միանգամ ազգի պատմութիւնները. ազգութիւնք և կրօնք մեր ազգին խիստ թանկ են նստել: Հայաստանի հողերը մեր հայրերի արիւնովն են ներկած, մեր եկեղեցեաց և վանօրէից քարերը, կիրը և աւազը մեր նախնեաց արիւնովն են շաղաղած, քրիստոնէութեան սկզբից մինչև էս օրս բարբարոսաց բուռն իշխանութեան տակ եղած Հայերի տխուր վիճակը, ուրիշ բան չենք տեսնում, բայց միայն քրիստոնէութեան և ազգութեան համար անթիւ մարտիրոսների ամենադառն և սոսկալի չարչարանքներով եղած մահեր. Բարեկենդանի հինգ շաբթի օրը Հայոց եկեղեցին իրա բարեկենդանութեան պատճառ Վարդանանց նահատակաց տօնն է կատարում հրաշալի երգերով, և իրա ճշմարիտ երախտագիտութեամբը Հայաստանումը այն օրը մեռելոց յիշատակ կատարելով գերեզմանները օրհնել են

(1). Ղուկ. ԺԲ. 32.
(2). Մատթ. Ե. 3.
(3). Խորէն. Գ.

տալի. կարծեմ որ դուք ևս այս հոգւով այս բարեկենդանի հինգ շաբթի օրը գնայիք և այն բազմերախտ սուրբերի յիշատակը պատուեցիք։ Միայն Վարդանը չէր հաւատոյ պաշտպան, այլ Նորա դուստր Շուշանն էր, որի գերեզմանը ձեր աչքի առջև Մետեխի եկեղեցումն է, որ Հայ կանանց քաջասիրտ արութեան և քրիստոնէութեան և ազգութեան մէջ մնալու օրինակ լինելու համար, իրա ամուսին ուրացեալ Վազգէնից շատ չարչարանքներ կրելից յետոյ, մարտիրոսութեան պսակը ընկալաւ։ Այդ հալածանքների և անգութ մահերի բռնութիւնները ոչ միայն չկարացին մեր եկեղեցին կործանել, այլ ընդ հակառակն աւելի ամրացրին։ Հայաստանի քաղաքները, շէները, վանքերը և եկեղեցիները քանդուեցան, բայց Հայերը ամենայն անապատ իրանց համար արքայանիստ քաղաք համարեցին, և ամենայն տուն, կամ, ինչպէս Եղիշէն ասում է, Ամենայն անձն իրա համար եկեղեցի էր, որովհետև ունէր իրա հետ քրիստոնէութիւնը և ազգութիւնը։ Քրիստոսի եկեղեցոյ կեանքը մին շարունակ պատերազմ է եղած Հայաստանի մէջ իրա սկզբնաւորութիւնից մինչև ներկայ դարը. ամէն դժուարին հնարքները Նորա հաւատոյ մասերից մինն էլ չկարողացան խլել. միշտ անփոփոխ մնացած է նա։ Այնքան արիւնահեղ պատերազմներից յետոյ էլի Հայաստան կայ էն ամէն բաներով, որը որ ունէր Աստուածային հիմնադիրը տուել էր նրան։ Մեծամեծ աշխարհակալներ եկան, գնացին, բայց Հայոց հաւատը անխախտ մնաց. անգութ բռնաւորները Հայերի ամէն բանը կողոպտեցին, բայց նոցա հաւատը աղքատութեան հետ աւելանում էր. զրկեցին Հայերին իրանց Հայրենի երկիրներից, ցիր և ցան արին նրանց Արևելքից Արևմուտք, բայց նրանք թողին ինչ որ ունէին, և ուր գնացին, իրանց ազգութիւնը և եկեղեցին հետերը տարան և պաշտեցին։ Մեր ազգը և եկեղեցին, թէպէտ միշտ թշնամիներով շրջապատած է եղել, բայց միշտ Քրիստոսի աներևոյթ զօրութեամբը սպառազինած յաղթել է նրանց։ Մենք այն եկեղեցւոյ և ազգի որդիքն ենք, որոնք մի միայն աշխարհի ալէկոծեալ հեղեղների մէջ անտէր, ան-

օգնական պահել են իրանց հաւատալի ճշմարտութիւնները, իրանց լեզուն, իրանց կարգադրութիւնները և իրանց պաշտաման ձևերը։

Հայաստանը էն պատուական մատանին էր, որը որ Աստուած մին կրակից միւս կրակը դցեց և նրա ընտրուիլը փորձեց։ Հայաստանը էն երկնային ջուրն էր, որ փորձանաց մրրկախառն մաղերից անց կացած պարզ և անարատ է մնում մինչև էս օր։ Աստուած Հայոց ազգը իւր խնկական պատկեր համարելով և նրան աւելի սիրելով չըկամեցաւ որ իւր ամենապարզ էութեան հակառակ բիծեր, կեղտեր գտնուին նրա մէջ, և փորձութեան բովերումը սրբեց նրա վրա երևեցած բիծերի նշմարանքները։

Հայաստանի նեղութիւնքը իրա փառքն են. Քրիստոսի անուան համար եղած հալածմունքները մեր ազգի պսակն են. ինչպէս անհատի, նոյնպէս և բովանդակ ազգի հալածանաց և փորձութեանց մէջ տուած ուսումը՝ ոչ մին ուսումնարանումը չեն սովրեցնիլ։ Հայոց ազգը այս ուսման մէջ ծնած է և սնած։ Իգնատիոս Հայրապետը երբ մեռնելու մօտ էր, եկան աշակերտները և խնդրեցին նրանից օրհնութիւն։ Երկու անգամ խնդրեցին, ձայն չըտուեց. վերջապէս յանկարծ տեղի վրա կանգնեցաւ, ձեռները վերցրուց և ասաց ‘‘ խնդրում եմ Աստծանից ձեզ համար հալածանք, հալածանք, հալածանք,,։ Կարծեմ մեր Լուսաւորիչն էլ իրա կեանքը հալածանքով սկսած և հալածանքով վերջացրած Մանեայ այրի մէջ մեռնելու ժամանակը վերցրուց ձեռները առ Աստուած, դարձրուց աչքերը Հայաստանի վրա և ասաց ,,հալածանք, հալածանք ,,։ Ի՞նչ էին անում արդեօք մեր նախնիքը այսչափ հալածանաց մէջ։ Տկար Թերահաւատների պէս վհատո՞ւմ էին. ոչ. Թողնո՞ւմ էին իրանց քաղքայեալ եկեղեցին. ոչ. փախչո՞ւմ էին իրանց հալածեալ և Թափառական ազգից. ոչ։ Այլ ի՞նչ. աջ ձեռով Աւետարանը բռնած և ձախու ձեռով Եղիշէի պատմութիւնը՝ հաւատոյ Թշնամեաց դէմ ասում էին ‘‘ այլ ինձ քաւ լիցի պարծիլ, բայց միայն 'ի խաչ Տեառն մերոյ Յիսուսի,

որով աշխարհ ինձ 'ի խաչ ելեալ է և ես աշխարհի (1)։ և Ո՛վ մեկնեսցէ զնա 'ի սիրոյն Քրի. նեղութիւն, հալածանք եւայլն. (2)։ ,,։ Իսկ հաւատոյ և ազգութեան հետ միասին պատերազմողներին դէմ կրկնում էին հինգերորդ դարու Հայերի պատասխանը՝ ‘‘ Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ
,, խախտել, ոչ հրեշտակք, ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր,
,, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն տանջանք։ Ա-
,, մենայն ինչք և ստացուածք մեր 'ի ձեռս քո և մարմինք
,, մեր առաջի քո կան. արա ըստ կամաց քոց զինչ և կա-
,, միս . . . . 'ի քէն տանջանք, և 'ի մէնջ յանձնառու-
,, թիւն. սուր քո, և պարանոց մեր։ Զի ոչ եթէ ընդ մար-
,, դոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիցեմք իբրև
,, զտղայս. այլ անլուծութեամբ ենք ընդ Աստուծոյ, որում
,, չէ հնար քակել և 'ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ առ-
,, յապայ և ոչ յաւիտենս և ոչ յաւիտենից,, (3)։

Այս է ահա այն երդման թուղթը, որը որ կնքեցին մեր նախնիքը Քրիստոսի խաչովը և իրանց արիւնովը, ոչ միայն իրանց կողմից, այլ և մեր և մեր որդւոց և թոռանց փոխարէն յաւիտեանս յաւիտենից առելով։ Այս ուխտի վրա հաստատ մնացին մեր նախնիքը. այս երդումը նրանք սուր տակ չ'առին մինչև ցայսօր. այլ ինչպէս իրանց հօրերից և պապերից ընկալած էին, ժառանգութեամբ մեզ հասցրին քրիստոնէութիւնը և ազգութիւնը։ Ուրեմն պէտք է ճանաչենք և պահենք էն ճանապարհը, որը որ բռնեցին մեր նախնիքը. պէտք է ճանաչենք Քրիստոսի և անթիւ մարտիրոսների արեամբը գնած մեր եկեղեցւոյ և ազգութեան յարգը. ոչինչէ տեղ չըհամարենք այն անգին արիւնները. չըլինինք երդմնազանց. այլ մեր նախնեաց քաջութեամբը զիուորած, եթէ հարկ լինի, տանք ինչ որ ունինք և անկարօտ

(1). Գաղատ. զ. 14.
(2). Հռովմ. ը. 35.
(3) Եղիշէ.

պահպանենք մեր եկեղեցին և Ազգութիւնը։

Ահա սրանք էին այս մեր տան և ուխտի ամենայ գաւերը․ ահա այս երկու պարտուց, այսինքն Քրիստոնէութեան և Ազգութեան դէմ եղած ախտերի բժշկութեան ուսումն էր մեր առարկան և նպատակը ։ Այն բան երա պտուղից կըձանաչուի․ մեր կրթութիւնը, ինչպէս այս պատկերի մէջ տեսաք, չէ և չըպիտի լինի չոր և ցամաք նիւթական կրթութիւն, այլ պէտք է լինի հոգւոյ և մտաց կրթութիւն։ ,, փոխէ մին մարդոյ կրթութիւնը, գոչում է Պերնարդէն - տը - Սէն - Պիէր, կըփոխես նրա միտքը, նրա կրօնքը, նրա հաւատը, նրա իմաստութիւնը։,, Պարծանք չենք համարիլ մեզ համար լեզուագիտութիւնը և զանազան առարկայից գիտութիւնը, եթէ չըծառայեն նրանք հոգւոյ և և մտաց կրթութեան, եթէ նրանց նպատակը չըլինի քրիստոնէութեան և ազգութեան յառաջադիմութիւնը։

Այս կրթութիւնն է մեր մտաց միակ առարկան․ սրա մէջ պէտք է յարատևենք մեր ջանքը և խոստանում ենք նրա տարածման գործի և պաշտօնեայ լինել մինչև մեր կենաց վերջին շունչը։ — Ուրեմն եթէ ներկայ տարւոյս հարցաքննութեան մէջ թերութիւն ունեցանք, խնդրում եմ Ձեր ներողամտութիւնը, գիտելով, թէ որքան բազմաբեղուն և որքան դժուարահաս է մեր իսկական նպատակը, որ պիտի բարձրացնի մեր հոգին և միտքը և հասցնի իսկական նմանուն Աստուծոյ, որում փառք և երկրպագութիւն յանվախճան յաւիտեանս․ ամէն։

Ասաց աշակերտ վերին դասարանի Յարութիւն Մելիքմանեանց

Յաւարտ ճառին դասք երգեցողաց երգեցին զշարական դձ․ Վրանն աշխարհի և ճառագայթ իմանալի․ եայլն։

Յետոյ Գործավարն և Հաշուապահն Հոգաբարձութեան Ազգ. Վարժապետն Ռուսաց Գրականութեան Միքայէլ Սերովբեան Պատկանեանց ընթերցաւ յամփոփնէ զհետևեալ ընդհանուր հաշիւն։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇԻՒ

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻԶՈՅ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

Երբ որ Վրաստանը հանդարտուեցաւ էն բռնութիւններից, որոնք տանջում էին նրան սահմանակից ազգերը. երբոր այս կողմի Հայերը հանգստացան Ռուսաց ամենօրհնեալ կայսրութեան քաղցր հովանաւորութեան տակը և ճանաչեցին իրանց բաղտաւորութիւնը, այն ժամանակուայ Վրաստանի Վիճակաւորը և այժմ Վեհափառ Կաթուղիկոսը ամենայն Հայոց և Սրբազնակատար Հայրապետը Ներսէս հիմնեց և 1824 թուին բաց արաւ էս Հոգևոր Դպրոցը, որ բոլոր Ռուսաստանի Հայոց դպրոցների մէջ առաջինն է իրա բարեկարգութիւնով և տուած պտուղներով, և որ իրա հիմնիկուայ դրութիւնով մեծ յոյս է տալի մեր ազգին։

Այս հաշուի սահմանաւոր տարածութիւնը թոյլ չի տալի մեզ մանրամասն քննութիւն անել, թէ սրա բացուելոյ օրից մինչև 1850 թիւը ինչքան փոփոխութիւններ անցկացան այս Դպրոցի վրա. միայն կարող եմք ասել, թէ իրա բացուելոյ առաջին տարիներին սրա մէջ ուսումն էին տալի շատ գիտութիւններ և շատ լեզուներ և էն ժամանակը դուրս եկան սրանից ուսեալ Հայ երիտասարդներ, որք իրանց գիտութիւնով ստացան զանազան արժանայարգ պաշտօններ։ Իսկ վերջին ժամանակներումը ընկաւ սա զանազան փոփոխութիւնների տակ, որոնց պատճառները մէկ մէկ քննել ծանր կըլինի ներկայ հանդիսիս։ Երբ որ այս վիճակի մէջ էր մեր Դպրոցը Աստուած բարեհաճեցաւ այցելութիւն անել մեր ազգին, և այս ազգաօգուտ ուսումնարանի հիմք դնողին բարձրացրուց Հայրապետական աթոռի

վրա։ Այն օրից ուսումնարանի վիճակը փոխուեցաւ. Վեհափառ Հայրապետը կրկին տարածեց իւր ձեռը և ոտի կանգնեցրաւ սրան ինչպէս անմահ արձան իւր անմոռանալի անուան։ Կրկին բաց արաւ ուսումնարանը, և 1850 Թուի մարտի 20 ին նրա մօտ հաստատեց 40 որդեգիրների Ընդունարան, որ պահպանուէին էստեղ ուսումնարանի բոլոր ծախքով, թէ, կերակրով, շորով և այլն, և ուսում առնելուց յետոյ ձեռնադրուէին քահանայ եկեղեցեաց և ազգին ծառայելու համար։ Չբաւականացաւ միայն կեանք տալով սրան, այլ հաճեցաւ այնպիսի արդիւնքի աղբիւրներ էլ տալ, որք կարող են ոչ միայն պահպանել սրան, այլ և մշտնջենաւորել սրա կեանքը և ինչպէս որ, ոչ թէ մի անգամ չքաւորանայ վեր ընկնել, այլ օր ըստ օրէ մեծանայ, պայծառանայ և տարածի իւր լուսաւորութիւնը բոլոր ազգի մէջ. Այս տուած արդիւնքի աղբիւրներն են՝ ա. Եկեղեցիքից դուրս ծախելու մեղրամոմը. բ. Բոլոր Վրաստանի և Իմերեթի վիճակի Ուխտատեղիքը. գ. Թէլէթի այգին, որ ընծայած է պարոն Դամբարեանից. դ. Սողանլուխի այգին, որ ընծայած է յիշատակաց արժանի վրաց ազգէ Սնեադ Օթար Մէլիքսախվարովից և ե. Գողցոյի Տապրանը։ Այս աղբիւրներից եկած արդիւնքը, ուսումնարանի ծախքը և բոլոր տուած տեղերը կառավարելու համար բարեհաճեցաւ Վեհափառ Հայրապետը ընտրել և հաստատել երեք Հոգաբարձու և Հայրապետական կոնդակով 1851 Թուի մարտի 9 ին համարք 68, 69 և 70 կարգեց Հոգաբարձու Տիտուլեարնի Սովետնիկ և Ասպետ Պաւլէթ Յովհաննէսեան Թումանշեանին, Ազնուական Պաւլէթ Գրիգորեան Խոջրոզլինեանին և Գէորգ Ռոստամեան Սանդլինեանին, որոնք էն օրից մտան այս պաշտօնի մէջ և ծառայում են մինչև ցայսօր։ Եւ ահա այս տեսակ հաստատուած Հոգաբարձութիւնը պարտաւորութիւն է համարում իրան ամենայն տարի բոլոր իւր գործերի, արդիւնքի և ծախքի հաշիւը ներկայացնել Վեհափառ Հայրապետին, յորդոր Հանդիսականներին և բոլոր Հայոց ազգին։

Հոգաբարձութեան բացուելոյ օրից մինչև 1852 Թուականը հետևեալ կարգադրութիւնները եղան.

ա. Գանձապահի (կասսիրի) պաշտօնը Հոգաբարձուքը սկսան կառավարել ամէն մէկը չորս ամիս ժամանակաւ։
